

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 55/3

14 դեկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Նահապետ Թամրազյանի լիազոր ներկայացուցչի կողմից 06.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 23.11.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 208228 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 23.11.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 208228 որոշման համաձայն, Ա/Ձ Նահապետ Թամրազյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկերը և սոցիալական ապահովության վճարի գումարները չվճարելու համար <վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 10.000 դրամի:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Նահապետ Թամրազյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ ներկայացուցիչների բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

07.11.2011թ-ին Ա/Ձ Նահապետ Թամրազյանը հարկյին տեսչություն է ներկայացրել դիմում-հայտարարություն արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ: Ընդ որում, 07.11.2011թ-ի դիմում-հայտարարությունում Ա/Ձ Նահապետ Թամրազյանը նշել է, որ հրաժարվում է սոցիալական ապահովության վճարը վճարելուց:

07.11.2011թ-ի դիմում-հայտարարությունը, ինչպես նաև արտոնագրի համար նախատեսված գումարի վճարման փաստը հավաստող հանձնարարականը Ա/Ձ Նահապետ Թամրազյանը 28.10.201թ-ին փոստային ծառայության միջոցով ուղարկել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 23.11.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 208228 որոշումը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 23.11.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 208228 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ